

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

Արդէն հազար ութ հարիւր եօթանասուն և եւրօրօրէ անգամ եկեղեցին տօնում է այս մեծ և խորհրդաւոր տօնը: Այդքան անգամ պահեցողութեան օրերից յետոյ հնչել է եկեղեցու բեմից, որ «Քրիստոս յարեաւ և մահուամբ զմահ կոխեաց» և անշուշտ քիչ չի պատահել, որ այդ տօնին փոխանակ կարմիր ուրախական և բարեփոխութեան գոյնի, մարդիկ իրենց բոսորային արեամբ ներկուած, վշտապատ և յուսահատ սրտով են հանդիպել յարութեան օրերին:

Բայց մարդկային յառաջադիմութիւնը, արդարութեան յաղթանակը կատարւում է աստիճանաբար, շեղումներով, մեծամեծ ցնցումներով և երբեմն վերադարձով դէպի անցեալը, դէպի առաւել անկատար ձևերը՝ որպէս յետադիմութիւն: Բայց որ նա երբէք կանգ չի առնում և աւելի և աւելի մօտենում է մարդկութեան իսկական իդէալին՝ արդարութեան, ազատութեան և հաւասարութեան, դրանում կասկած չկայ:

Ուժդին ցնցումների, հարուածների և մեր շուրջը կատարուող անարդար հալածանքի ժամանակ երբեմն թուլասիրտ կերպով վհատւում ենք, դադարում ենք հաւատալ արդարութեան յաղթանակին, բայց մեր սխալը հէնց այդտեղ է, որովհետեւ այդ բոլորը նշան է մի նոր հսկայական թռիչքի դէպի առաջ, մի ուժեղ հոսանք դէպի լոյսը, դէպի ճշմարիտը և դէպի յաւիտենականը:

Մենք, եթէ միայն հարեանցօրէն, թեթեւակի նայելու լինենք մեր շուրջը կատարուած դէպքերին, եթէ հաշուելու լինինք գործադրուած բոլոր վայրագ միջոցները, հալածանքն ու արիւնը, եթէ քննելու լինինք այն, ինչ որ այժմս դրւում է հրապարակի վրայ իբրեւ արդարադատութիւն և պատուհաս, իբրեւ իրաւունք և պարտական-

նութիւն, իբրև խնամատար և խնամարկեալ և այլն, իսկապէս կը հասնենք ծայրայեղ յուսահատութեան և կը գոչենք. ոչ, վաղուց արդէն վերացել է մարդկանցից քրիստոնէական զգացմունքը, Աւետարանի սէրն ու գութը, հաւատն ու անձնութեան թիւնը, ուրեմն նա յաւիտենական չէ, դադարել է նրա գոյութիւնը և մարդիկ սկսել են բոլորովին հակառակ գաղափարներ պաշտել: Եւ իրօք կան և միշտ էլ եղել են մարդիկ, որոնց պաշտամունքի առարկան եղել է իրենց անձը, կիրքը, սնտփառութիւնն ու իշխանութիւնը, արտաքինը, կեղծիքը և ոչ թէ յաւիտենական ճշմարտութիւններ, որոնցով այնուամենայնիւ ճարպիկ կերպով վարագուրել են իրենց բարոյական այլանդակութիւնը: Բայց մի կողմի լռութիւնն ու խոնարհութիւնը միշտ ծայրայեղութիւնների է հասցրել այդ տեսակ հերոսներին, իսկ ծայրայեղութիւնները շարժել և զգայուն են դարձրել նոյն իսկ այն իներտ տարրը, որը շատերի կողմից համարուել է մեռած ու դիակնացած: Այո, երկար գերեզմանական խաղաղութիւնից յետոյ յանկարծ այդ անտարբեր, անզգայ տարրը շարժուել է և ստեղծել անհաւատալի փոթորիկ՝ վերջ դնելու երկարատև անարդարութեան և մերձենալու յաւիտենական ճշմարտութիւններ իրականացնելուն: Ահա այդպիսի փոթորկի ժամանակ միշտ տեղի է ունեցել տարերային մի կռիւ և թուլահոգիք միշտ յուսահատուել և երանի են տուել անցեալ անկենդան և անշարժ օրերին: Ճիշտ նոյն բանն է ներկայացնում մեր ներկան. այս տարուայ յարութեան տօնին: Բնութիւնը դեռ չի տաքացել, փոթորիկ է, գոչում է ուժգին քամին և հանում գազանային ձայներ: Յուրտ է. ձմռան սառնամանիքից փայտացած մարդիկ, որոնք յոյս ունէին յարութեան հետ տաքանալ ու գարնան արևի ճառագայթների շնորհիւ, յուսահատուել են. չեն ուզում հաւատալ, որ գարունն անշուշտ գալու է և փախչում են, փախչում փոթորկից: Օգային փոթորկի հետ միացած գործում է և մարդկանց փոթորկած կիրքը, որը ոչ մի սրբութիւն, ոչ մի սահման,

ոչ մի բարոյական և հասարակական օրէնք չի ճանաչում: Ծիշտ է արեւն ու լուսինը չեն խաւարել. ճիշտ է տաճարի վարագոյրը միջից չի պատռուել, բայց երկրաշարժ է. մեռելները արդէն յարաւթիւն են առել և հրաբորբոք ճառում են իրենց իրաւունքների մասին, բողոքում իրենց գերեզմանական անշարժութեան դատապարտողների դէմ և այդ գերեզմանների աշխարհը ցնցում է, շարժում փոթորկում: Այդ անսովոր երեւոյթն է և հակադարձ շարժման պատճառը: Եթէ Աստուածամարդը իւր յաւիտենական ճշմարտութիւններով չը խորագանէր իւր ժամանակակից իշխաններին և քահանայապետներին, մաքսաւորներին և դպիրներին, եթէ նրա քարոզի և կենդանի օրինակի շնորհիւ չը շարժուէր աշխատատիրների և բեռնատիրների խումբը իրեն նեղիչներին դէմ, Գողգոթան չէր տեսնի Փրկչի խաչը, չէր ողողուիլ նրա մաքուր արիւնով, հանդէս չէին դալ կայսերական զինուորներն ու մարտեցրած կոյր ամբոխը և չէր կատարուիլ այն մեծ անարդարութիւնը, որից երկինքն ու երկիրը ստատնեց: Ծիշտ է, խաչի մօտ կային անհեռատես, թուլասիրտ, վաշ վաշ կանչողներ ու արտասուողներ, որոնք միայն հեռուից էին նայում, կային սարսափահար փախչողներ էլ, բայց այդ այն չէր նշանակում, որ արդարութիւնը մեռաւ, յաղթուեց ու ոչնչացաւ և չը պէտք է լինի այլ ևս նրա մասին ճառող աներկիւղ Աստուածամարդը, երկրիս վերայ Աստուծոյ արքայութիւնը մարմնացնելու միջոցների քարոզիչը: Փրկչին խաչից իջեցրին և թաղեցին, ծածկեցին տհազին վիմով և կեքեցին, մենք չը գիտենք, թէ ինչ անցաւ մինչև նրա յարութիւնը, բայց նա յարեաւ և այդ յարութեամբ յաղթեց իրեն խաչողներին: Շատ չանցած ժողովուրդն իւր հաքուստներին և իշխանաւորներին թողած, վազում էր նորա ձկնորս աշակերտների ետից և փառաբանում խաչեցեալի դործն ու անունը: Այնուհետև շատ անգամ է կանգ առել ու լծացել մարդկային յառաջագիծութեան և քաղաքակրթութեան հասանքը, շատ անգամ են պատնեշ կանգնեցրել նրա մտքի և հոգու

աղատ գործունէութեան դէմ: Կենդանութեան նշան ցոյց տուողներով լցրել են բանտերն ու աքսորավայրերը. խաբայիկների և կախաղանների վրայ կտրել են աւելի զգայուն և եռանդոտների կեանքի թելը և հասարակական կեանքը ժամանակաւորապէս կարծես մեռել, կանգ է առել, լճացել: Բայց այդպիսի դէպքերին հետեւել է հեղեղը, հետեւել է փոթորիկը և քար ու քանդ անելով իրեն առաջ դրուած պատնէշները, գրոհ է տուել դէպի առաջ, կեանք և կենդանութիւն մացնելու մեռած բնութեան մէջ: Այդպիսի խորհրդաւոր օրերումն ենք ապրում և ներկայ զատկական տօներին, կարմիր ձուի փոխարէն շատ տեղ փայլում են կարմիր բոցերն ու արիւնը, ուրախական աղաղակների փոխարէն լսում է սարսափահար կանանց և երեխաների ճիչը. փոթորիկ է, ցուրտ է ու տխուր, բնութեան հետ տնքում են նաև մարդիկ. բայց մարտը վերջացաւ. եկել է ապրիլը. տեղ տեղ արդէն լսում է մեռելների անլեզուների և ճնշուածների յուժկու ձայնը. նրանք յարութիւն են առել, բնութիւնն էլ է արդէն յարութիւն առել և ծածկուել կանաչով: Մի դողար տանջուած, հալածուած եղբայր. Քրիստոս յարեաւ. մեռելները լեզու են առել և կենդանացել. մօտենում է մարդկային մեծ թախչի ժամը դէպի արդարութիւնն ու հաւասարութիւնը, Խորհրդաւոր օրերին. արիացիր տանջուած, յուսահատ եղբայր. Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Կը տաքանայ բնութիւնը. կը յաղթեն արևի հզօր ճառագայթները և կը ծաղկի բնութիւնը. մարդկանց համար բերելով ցանկալի գարուն և արդարութիւն:

Ե. Յ. Վ. Մ.

